

«ԿԱՆԱԶ» ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ		
<b>Վարկի նպատակ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Էներգախնայողությանը ուղղված կոմերցիոն և արդյունաբերական ներդրումներ</li> <li>• Վերականգնվող Էներգիայի աղբյուրներին ուղղված ներդրումներ</li> <li>• Կոմերցիոն, արդյունաբերական և բնակելի շինությունների Էներգախնայողությանն ուղղված ներդրումներ</li> <li>• Էներգախնայողության կամ վերականգնվող Էներգիայի տեխնոլոգիաների, սարքավորումների, նյութերի արտադրությամբ, մատակարարմամբ կամ տեղադրմամբ զբաղվող ընկերությունների ֆինանսավորում</li> <li>• Առաջնային Էներգիայի սպառման և CO<sub>2</sub> արտանետումների նվազեցմանն ուղղված ներդրումներ</li> <li>• Կլիմայական ադապտացիային ուղղված ներդրումներ</li> </ul>	
<b>Վարկի արժույթ</b>	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար

<b>Վարկի գումար</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հաստատուն տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 5,000,001- 1,000,000,000 ՀՀ դրամ</li> <li>• Լողացող տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 5,000,001-500,000,000 ՀՀ դրամ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հաստատուն տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 10,000-1,000,000 ԱՄՆ դոլար</li> <li>• Լողացող տոկոսադրույքով վարկերի դեպքում՝ 10,000-1,000,000 ԱՄՆ դոլար</li> </ul>
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԷԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԱ:		
<b>Վարկի ժամկետ</b>	1 - 120 ամիս	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար

<b>Տարեկան անվանական տոկոսադրույք</b>	<b>Հաստատուն տոկոսադրույքով վարկերի դեպքում՝</b>	
	Սկսած 9%-ից	Սկսած 8%-ից
	<b>Լողացող տոկոսադրույքով վարկերի դեպքում՝</b>	
	Առաջին երեք տարին չփոփոխվող՝ սկսած 9%-ից , այնուհետև լողացող	Առաջին երեք տարին չփոփոխվող՝ սկսած 8%-ից, այնուհետև լողացող
<b>Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճար</b>	Վարկի գումարի 0-3%	
<b>Վարկառուի նկարագիր</b>	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ <sup>1</sup>	
<b>Ֆինանսավորման չափ</b>	Ներդրման համար անհրաժեշտ գումարի մինչև 100%-ի չափով	
<b>Վաղաժամկետ մարման տուգանք (պայմանագրով նախատեսված լինելու դեպքում)</b>	Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդից պահանջելու վճարել տուգանք՝ վաղաժամկետ մարվող գումարի մինչև 5%-ի չափով: <sup>2</sup>	
<b>Լողացող տոկոսադրույքի հաշվարկման և վերանայման պայմաններն ու կարգը</b>	Լողացող տոկոսադրույքը հավասար է հղման տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի գումարին: Հղման տոկոսադրույքը՝ Հիմնական ցուցանիշ • ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ:	

<sup>1</sup> Վարկառու կարող են հանդիսանալ այն ֆիզիկական անձինք, ովքեր գործունեություն են ծավալում գյուղատնտեսության ոլորտում:

<sup>2</sup> EBRD GEFF ռեսուրսի շրջանակներում տրամադրվող վարկերի դեպքում պայմանագրով կարող է սահմանվել սույն պայմանից տարբերվող այլ պայման:

Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ <https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx> ինտերնետային կայքում:

- ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար՝ 6 ամսական ԱՄՆ դոլարով ԼԻԲՈՐ-ի դրույքի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: LIBOR տոկոսադրույքը որոշվում է [www.global-rates.com](http://www.global-rates.com) կայքում հրապարակված տվյալների հիման:

Երկրորդային ցուցանիշ

- ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար ՀՀ ԿԲ կողմից սահմանվող միջբանկային ռեպո դրույքը: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ <https://www.cba.am> ինտերնետային կայքում:
- ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար Բանկի որոշմամբ հետևյալ ցուցանիշներից որևէ մեկը՝
  - Նյու Յորքի Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանվող SOFR տոկոսադրույքը: Հրապարակվում է Նյու Յորքի Ֆեդերալ Ռեզերվի կողմից՝ <https://apps.newyorkfed.org/markets/autorates/SOFR> ինտերնետային էջում:
  - ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի (ԱՄՆ կենտրոնական բանկ) կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը, իսկ այն միջակայքով տրված լինելու դեպքում միջակայքի վերին շեմը: Հրապարակվում է Ֆեդերալ ռեզերվի կողմից՝ <http://www.federalreserve.gov/fomc/fundsrate.htm> ինտերնետային էջում:

Ֆիքսված կոմպոնենտը՝

Որոշվում է սահմանված չփոփոխվող տոկոսադրույքից նվազեցնելով վարկի տրամադրման որոշման կայացման օրվա դրությամբ գործող 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի ցուցանիշը ՀՀ դրամով վարկերի դեպքում, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ 6 ամսական ԱՄՆ դոլարով ԼԻԲՈՐ-ի դրույքի մեծությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆԸ ՈՒՆԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ՓՈՓՈԽԵԼ ՖԻՔՍՎԱԾ ԿՈՄՊՈՆԵՆՏԸ, ԵԹԵ ԹՈՒՅԼ ԵՆ ՏՐԿԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ, ԳՐԱԿԻ, ԵՐԱՇԽԱԿՈՐՈՒԹՅԱՆ և ԿԱՍ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԲԱՆԿԻ ՀԱՆԴԵՊ ՍՏԱՆՁԱԾ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՒՅՆ ՍԱԿԱԳԼՈՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ԱՅԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ:

Տոկոսադրույքի վերանայում՝

	<p>Տոկոսադրույքը պարտադիր ենթակա է վերանայման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված Հղման տոկոսադրույքի<sup>3</sup> և գործող Հղման տոկոսադրույքի<sup>3</sup> տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետ և ավել: Բանկը տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում: Հղման տոկոսադրույքի մինչև 0,5 տոկոսային կետ փոփոխության դեպքում վարկի տոկոսադրույքը չի վերանայվում: Լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից վերանայվում է տարին 2 անգամ՝ փետրվար 15-ին և օգոստոս 15-ին: Նշված օրերը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշների վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը: Վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լողացող տոկոսադրույքների դեպքում անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 3 տոկոսային կետ: Հիմնական կամ երկրորդային ցուցանիշը բացասական թիվ /գրոյից ցածր/ լինելու դեպքում ցուցանիշը համարվում է 0 /գրո/:</p>
<b>Այլ պայմաններ</b>	<p>Համաձայն «Առևտրային վարկերի տրամադրման պայմանների և սակագներ» 01-CN-22 փաստաթղթի</p>

<sup>3</sup> Լողացող տոկոսադրույքի առաջին վերանայման ժամանակ, «գործող Հղման տոկոսադրույքի» փոխարեն հիմք է ընդունվում վարկի չփոփոխվող տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի տարբերության ցուցանիշը: